

**ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»
ՀԵՂԻՆԱԿԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ**

(Վ ա Ր կ ա ծ)

Վ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Ազաթանգեղոսի և նրա «Հայոց պատմության» վերաբերյալ ստեղծված է հարուստ բանասիրական գրականություն: Այժմ առանց որևէ վերապահության կարելի է ասել, որ Ազաթանգեղոսի Պատմության նախօրինակը գրված է եղել հայերեն: Այս հարցի շուրջ գոյություն ունի են մեծաքանակ հետազոտություններ, որոնց հետ անկարելի է չհամաձայնել: Իսկ ինչ մնում է հեղինակի անձնավորության հարցին, առայսօր բանասիրությունը դժվարանում է ճիշտ և համոզիչ պատասխան տալ, չնայած որ հարցի քննությանը և լուծմանը նվիրված են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք, սակայն, դեռ չեն կարողացել ընդունելի պատասխաններ գտնել:

Թերևս պատճառն այն է, որ պատմության հեղինակը գրքի առաջաբանում թողել է ինքնակենսագրական բնույթի տեղեկություններ, որոնք որքան էլ հսկասական, համեմայնդեպս նույնքան լուրջ մտածության տեղիք են տալիս:

Ազաթանգեղոսի անձի մասին այսօր հայտնի ենթադրությունների քննությանն ու համեմատությանն ավելորդ չենք համարում ևս մեկ անգամ անդրադառնալ՝ անելով մի շարք նկատողություններ, որոնք, կարծում ենք, կարող են լրացնել մեր ենթադրությունները և ինչ-որ չափով փոխել նրա անձի մասին մինչև այժմ եղած հայացքը:

Գրեթե բոլոր այն բանասերները, որոնք անդրադարձել են Ազաթանգեղոսին և նրա Պատմությանը, իբրև ընդհանուր գիծ ավանդաբար կրկնել են այն, ինչ գործի առաջաբանում իր կենսագրականի մասին հիշատակարանի ձևով թողել է հեղինակը. «Արդ հրաման հասեալ առ իս ոմն Ազաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծն Հոովմայ, և վարժեալ հայրենի արուեստի, Հոովմայերէն և Հունարէն ուսեալ դպրութիւն, և ոչ կարի ինչ անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց»¹:

Միմյանց հետևելով թե ինքնաբերաբար ազաթանգեղագետներից ոչ մեկը չի փորձել վերը մեջբերված հատվածի քննությունը տանել մինչև վերջ: Արդարև, թյուրիմացության տեղիք է տալիս նաև այդ հատվածի աշխարհաբար թարգմանությունը (թարգմանիչ Արամ Տեր-Ղևոնդյան). «Արդ՝ հրաման է հասել ինձ՝ Ազաթանգեղոսիս, որ մեծ Հոովմայից եմ, կրթված հայրենի գիտությամբ, սովորել եմ լատիներենն (հոովմայերեն) ու հունարենը, ուսանել դպրությունը և ոչ խիստ անտեղյակ (մնացել) նշանագրերի արվեստին»²: Նկատենք, որ մեր բոլոր մտածումները կապված են վերջին նախադասության հետ, այն է՝ «... և ոչ կարի անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց»:

Ասվածի մեջ ուրիշ բան չպետք է որոնել, պետք է միայն փորձել հասկանալ, թե ինչ է ցանկացել ասել հեղինակը: Իսկ թարգմանության մեջ, փոխանակ բառերի հատուկ նշանակությունը վերցնելու, դրանք հարմարեցված են այլ նշանակությունների, որով և անճշտություն է առաջացել: Խնդիրն այն է, որ «ձեռնարկություն» բառը, որ թարգմանված է արվեստ, Ազաթանգեղոսի մոտ բնավ այդ իմաստը չունի: Թե ինչ հիմունքով է հեղաշրջվել բառի իմաստը, դժվար է ասել: Գոնե որքան բառարաններն են վկայում, այդ իմաստով թարգմանությունը շատ երկբայելի է ու պայմանական: Երկու բառերի մեկը մյուսով փոխարինելը, այսպիսով, չպետք է ենթադրել տա, թե «արվեստ» նշանակում է «ձեռնարկություն», որի իմաստը, իմիջիպաց, շատ ճիշտ է նշված Հայկազյան բառարանում:

¹ Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 16:
² Նույն տեղում, էջ 17:

«Ձեռնարկելն, և գործն քունն հարեալ, ձեռներհցոյթին: Զան. հնարք. ձեռնտուութիւն»³: Նույն իմաստը, մի քանի մասնավոր նշանակությունների հավելումով, պահպանվում է և այլ բառարաններում⁴:

Բերենք «ձեռնարկություն» բառի գործածության տարբեր օրինակներ 5-րդ դարի հայ մատենագրությունից՝ հարկ եղած դեպքում աշխարհաբար թարգմանության զուգահիշ տարբերակներով, որոնք, կարծում ենք, ավելի համոզիչ կդարձնեն մեր ենթադրությունը: Այսպես, Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ մի ուրիշ տեղ կարդում ենք. «Արդ՝ հասալ առ իս հրաման ի մեծ արքայէն Տրդատայ՝ կարգել ինձ ի ձեռնարկութենէ նշանագիր ժամանակագրացն»: Դարձյալ նույն տեղում. «Արդ՝ եկեալ և ինքն մկրտի ի Յովհաննէ, ձեռն արկեալ գրել կտակ յախտենական...» («Արդ, նա գալով ինքը մկրտվեց Հովհաննէ-սից՝ ձեռնարկելով գրել հավիտենական կտակ...»⁵:

«Ձեռն արկանել» բարադրյալ ձևի նույն նշանակությամբ գործածությունը բնավ չըպետք է շփոթեցնի, քանի որ այն հոմանիշ է «ձեռնարկություն» բառին⁷, և ընդհանրապես, ինչպես գիտենք, խորք չէ մեր լեզվի մեջ հարադրական բարդությունների հակումը բաղադրիչների միավորման, առավել սերտ բառային իմաստ արտահայտելու ձգտմամբ համադրական բարդության վերածվելու. իսկ հաճախ էլ -ությունն առարկայացնող անձանցով կցական բարդության ստեղծման (ինչպես օրինակ՝ ակն կալել—ակնկալել—ակնկալություն, բանս—արկանել—բանարկու—բանարկություն, ակն անել—ակնանել և այլն):

Եվ բացի այդ, հարկ է նկատել, որ հայերենում անորոշ դերբայի նշանակությունը նույնն է, ինչ որ համապատասխան քայի քայիմաստը, օրինակ՝ ստեղծել—ստեղծեմ, ձեռնարկել—ձեռնարկեմ և այլն: Նշանակությամբ անորոշ դերբայը ավելի է մոտենում, նույնիսկ ամբողջապես նույնանում բայական գոյականին՝ կիրառության մեջ երկուստեք ապահովելով միմյանց ազատ փոխարինելու հնարավորություն: Օրինակ՝ «այբուբեն ստեղծելը»—«այբուբենի ստեղծումը», «տառերի ձեռնարկումը, ձեռնարկությունը»—«տառեր ձեռնարկելը» և այլն:

Այս համառոտ բացատրությունից հետո վերստին դառնանք մատենագրական աղբյուրներից: Խորենացու պատմության մեջ կարդում ենք. «Քանզի ոչ ուրուք մեծի թագաւորի կայր ի մնա ձեռնարկութիւնք այնպիսիք... /որովհետև ոչ մի մեծ թագավոր այնտեղ այսպիսի ձեռնարկություններ չէր ունեցել...»⁸: Նույն տեղում՝ «Եւ ժողովեցան Բիտոն և Բիկենդ երիցունք ի Հոռոմ քաղաքէ, ձեռնարկութեամբ սրբոյն Սեղբեստրոսի...»⁹: Դարձյալ Խորենացու Պատմության մեջ. «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ...»¹⁰: «Եվ իսկոյն ձեռնարկեցին թարգմանության...»¹⁰: Նույն տեղում՝ «... և քաջ վարժեալ հելլէն դրպրդ թամբ՝ ձեռնարկեցին ի թարգմանել և ի գրել» / «... և հունարեն գիտության լավ վարժվելով՝ ձեռնարկեցին թարգմանելու և գրելու»¹¹:

Նույն իմաստը առկա է և մյուս հեղինակների մոտ. «... քանզի ինքն ուխտացեալ է մարմնով, և ձեռնարկութեամբ բժշկաց չիք գտեալ առողջութիւն...»¹², «... քանի ևս առաւել այսպիսի մեծ և հոգևոր գործոյ ձեռնարկութիւն, ուր քազում կարևոր պէտք էին առաքինի արանց անօգնականութեան»¹³. «... ապա այսպիսի մեծ ու հոգևոր գործի ձեռնարկությանը որքան անհրաժեշտ է առաքինի շատ մարդկանց օգնականությունը»¹³, նույն

³ «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», հ. 2-րդ, Երևան, 1981, էջ 158:
⁴ Տե՛ս «Առձեռն Բառարան Հայկազեան լեզուի», Ա. Յոսիկյան, 1988, էջ 518, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, 1944, էջ 166, Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 141:
⁵ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983, էջ 16: Միշտ չէ, որ աշխարհաբար թարգմանություններում «ձեռնարկութիւն» բառը նույնությամբ պահպանվում է: Մտածված, որպեսզի տեղիք չտանք անտեղի թյուրիմացությունների, կզուգահիշենք աշխարհաբար թարգմանության այն օրինակները, որոնցում «ձեռնարկութիւն» բառը մնում է նույնը:
⁶ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 226—227:
⁷ Տե՛ս Ա. Մ. Սուրիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 412, Ա. Մ. Սուրիասյան, Ա. Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975, էջ 385:
⁸ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 290—291:
⁹ Նույն տեղում, էջ 292:
¹⁰ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 404—405:
¹¹ Նույն տեղում, էջ 424—425:
¹² Եղիշե, Վասն վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 340:
¹³ Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց թուրք առ Վահան Մամիկոնեան, Երևան, 1982, էջ 16—17:

տեղում՝ «Եւ այսպէս դիպեալ գիտի ճշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելի Մաշտոց» /«Եվ այսպէս, հայրց ճշանագրերը գտնելով՝ երանելի Մաշտոցը գործի ձեռնարկեց»¹⁴: Դարձյալ նույն տեղում՝ «Զոր պահեաց Աստուած, գոր ոչ ումեք այլում ի Հայաստան աշխարհիս մարդկան գոյ հնար ձեռն արկանել յայդպիսի գործ մեծ» («Բրի համար քեզ էր պահել Աստված, և Հայաստան աշխարհում էլ չկա ուրիշ մի մարդ, որ հնարավորություն ունենա ձեռնարկելու այդպիսի մի մեծ գործի») ¹⁵, «... գոր գործ և ձեռն արկանէր գործել՝ Տէր յաջողէր ի ձեռս նորա, և զօրանայր» («... ինչ գործի որ ձեռնարկում էր, Աստված հաջողություն էր տալիս նրա ձեռքին և զորացնում») ¹⁶:

Մեկ օրինակ էլ բերենք Կորյունի «Վարք Մաշտոցիից»: «Ապա յետ այնորիկ ձեռն արկանէր զդժպատեմ և զկամակոր բարբառիանոս աղանդն քննելոյ»: «Սպա որսնից նետ ձեռնարկեց նա անպատշաճ ու ծուր բարբառիանոս աղանդը քննելոյ»:

Այսքանից հետո, եթե «ձեռնարկել» բառի փոխաբերարար ստացած մի քանի ձևավոր իմաստ մի կրճմ դնենք, որոնք հանդիպում են նույն մատենագրական աղբյուրներում, օրինակ՝ «Նախ զմեր պարանոցս հատէք, և ապա յեկեղեցին ձեռնարկեցէք» ¹⁷ և այլն, և որոնք որպես «ձեռն» արմատի փոխաբերական ճշանակություններ արձանագրված են Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» ¹⁸, ապա, կարծում ենք՝ լրիվ հասկանալի կլինի «ձեռնարկություն» բառի իսկական ճշանակությունը:

Մենք բերեցինք 5-րդ դարի հայ մատենագրությունից գրեթե բոլոր այն անհրաժեշտ օրինակները, ուր հանդիպում է «ձեռնարկել» բառը, և տեսանք, թե այն ինչ ճշանակությամբ է գործածված:

Լինելով հատկապես ներգործական սեռի բայ՝ վերջինս անգամ իր անվանական գործածության մեջ հոգեբանորեն ենթադրում է գործողության, դրության հատկանիշը: Մեր քննելիք օրինակում, «Եւ ոչ կարի անտեղեակ լեալ ձեռնարկութեան ճշանագրաց» (նախադասության մեջ, ձեռնարկություն բայանունը իր լրացյալի՝ նախադասության ստորոգյալի միջոցով իր բայիմաստի արտահայտած ճշանակությունից իբրև հատկանիշ վերաբրում է ենթակային):

Իսկ «արվեստ» բառը, լինելով գոյական անուն, քնականաբար չի կարող ունենալ յերկարականական այդ նույն հատկանիշները և, իհարկե, աշխարհաբար թարգմանության մեջ ապահովել բնագիր խոսքի համապատասխան ճշանակությունը:

Այսպես մտածելով է ահա, որ ճիշտ չենք համարում ձեռնարկություն բառին արվեստի ճշանակություն տալը, քանի որ վերջինս զոնե մեր քննելիք օրինակում, իրոք, անհարմար հոնանիշ է:

Միանգամայն այլ է, երբ ասում ենք՝ անտեղյակ չեմ մնացել ճշանագրերի ձեռնարկությանը, և այլ՝ երբ ասում ենք՝ անտեղյակ չեմ մնացել ճշանագրերի արվեստին: Եթե առաջին տարբերակում «ձեռնարկություն» բառը ներունակ է իր բառային իմաստի մեջ ենթադրելու գործողության հետ կապված անմիջականություն, ապա երկրորդում այդ անմիջականությունը հեռանում է, և այդպես կարդալով կարող ենք հասկանալ նաև, թե նեղինակը այդ գործին կարդալով կամ որևէ մեկից լսելով է տեղյակ եղել:

Արդարև, որ արվեստ բառը մի քանի ճշանակություն ունի և այստեղ կարող էր օգտագործվել «ճարտարություն, հմտություն, ճարտար գործ և հնարք» ¹⁹ իմաստով, չենք կարող առարկել: Սակայն նկատի ունենալով, որ ձեռնարկություն բառն իր սովորական ճշանակությամբ աշխարհաբար թարգմանության մեջ լիովին կարող էր ապահովել իր քննագրային ճշանակությունը, դեռ ավելին, ըստ էության արտահայտել շարադրության բովանդակությունը, անհրաժեշտ չենք համարում «ձեռնարկություն» բառին արվեստի ճշանակություն տալը, անամանվանող որ տվյալ տարբերակում հեղինակի՝ այդ գործին ունեցած մասնակցությունը ստանում է մի երկրորդական հնչեղություն:

Ինչնիցե, անցնենք առաջ: Նշանագիր բառի համար գտնում ենք կրկնակի ճշանակություն. «ճշանագիր, գրող, ոց, կամի, աց- Գիր գծագրեալ ի ճշան հնչելի սառլի, ոստ, այբուրենք» և երկրորդ՝ «ճշանագիր—ճշանագրողն, և ճշանագրեալն, որպէս դպիր կամ

¹⁴ Նույն տեղում, էջ 34—35:

¹⁵ Նույն տեղում, էջ 38—39:

¹⁶ Նույն տեղում, էջ 270—271:

¹⁷ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 116—117:

¹⁸ Եղիշե, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, էջ 130:

¹⁹ Հր. Աճառյանը «ձեռն» արմատի համար նշում է «միջոց, օգնություն, պաշտպանություն, իշխանություն ևն» փոխաբերական ճշանակությունները: Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 14:

²⁰ «Նոր քառօրյա Հայկազեան լեզուի», հ. 1, էջ 87:

ճտար համաժողովի և երագագիր, և գրուած նորին»: Հետաքրքիր է, որ ճշանագիր բա-
ռի ճշտական քաջատրոյան համար օրինակ է ծառայել մեր քննելիք ճախադասու-
թյունը²¹:

Ըստ այսմ ունենում ենք թարգմանութեան երկու տարբերակ՝ կրկնակի ճշանակութեամբ:
Առաջին՝ «և ոչ խիստ անտեղյակ (մնացել) լինելով այրութեան հնարքին կամ ձեռնարկե-
լում» և երկրորդ՝ «և ոչ խիստ անտեղյակ (մնացել) լինելով ճշանագրողների հնարքին,
ձեռնարկութեամբ»:

Ինչպես տեսնում ենք, այնուամենայնիվ, փոփոխակներն միշտ իմաստային տարբերու-
թյուն կա: Առաջին տարբերակում, եթե ճշվում է հեղինակի իմացութեանն ու մասնակցու-
թյունը տառի, այրութեան ստեղծման գործին, երկրորդում՝ պարզապէս հիշատակվում է,
որ նա անտանք չի եղել ճշանագրողների հնարքին ու ձեռնարկութեամբ:

Եթե հետեւենք վերը մեջբերված հատվածի թուգանակութեանը, ապա առավել տրա-
մարանակաւն է թարգմանութեան առաջին տարբերակը, որտեղ այրութեան ստեղծման գոր-
ծի քաջատեղյակութեանը լատիներեանի, հունարեանի իմացութեան հետ հաջորդաբար հեղի-
նակը ներկայացնում է իբրև իր մտավոր ունակութեաններից մեկը՝ թերևս ցանկաճարով
առավել ամբողջական դարձնել պատկերացումն իր աճի մասին: Եթե այդպէս է, չենք
կարծում, թե լեզուների իմացութեան հետ համահավասար ճշանակութեամբ է հիշատակվել
այդ փաստը, քանի որ այրութեան ստեղծումը ամենժամանակյա գործ չէր և իր կարևորու-
թեամբ չէր կարող պարզապէս թվարկվել իբրև լեզուների իմացութեան հետ ևս մեկ կա-
րողութեան, անկախ այն քանից, որ իր մասնակցութեանն այդ գործին հեղինակը շատ
համեստ է հիշատակում:

Ինչպիսիք, ինչպիսի ենթադրութեաններ էլ որ անելու լինենք, այնուամենայնիվ, գլխա-
վորը մնում է այն, որ հեղինակն իր անունը կապում է ճշանագրերի ստեղծման գործի
հետ: Իսկ դա, մեր կարծիքով, ամենակարևոր հանգամանքն է, որի հիմքի վրա էլ զար-
գանում են մեր հետագա ենթադրութեանները:

Այժմ հետաքրքիր է, թե ինչ ճշանագրերի ձեռնարկութեանը կարող էր վերաբերել հե-
ղինակի խոսքը: Միանգամից ասենք, որ այստեղ ևս Պատմութեան տեղեկութեանները ցա-
վալի կերպով անբավական են:

Սակայն նկատի ունենալով, որ խոսքը վերաբերում է հինգերորդ դարի առաջին կե-
սին, կարելի է գուշակել, որ պատմիչը խոսում է հայկական այրութեան մասին, ինչ որ
շատ հաճախական է: Պատմութեանից մեզ հաշտնի չլ մեկ այլ այրութեան, որը ստեղծված
լինի հինգերորդ դարում, բացի, իհարկե, վրաց և աղվանից ճշանագրերի ստեղծումից,
որոնց հայտնագործումը ևս անմիջականորեն կապված է Մաշտոցի անվան հետ: Թեպետ
դժվար է որոշել, թե Ագաթանգեղոսը խոսում է հենց հայ ճշանագրերի²², թե առհասարակ
ճշանագրերի ստեղծման շուրջ, որը սովյալ դեպքում կարող էր վերաբերել նաև վրաց և
աղվան լեզուներին, սակայն մի քան հաստատապէս կարելի է ասել, որ նա անմասն չի
մնացել այդ գործից:

Թերևս հարց առաջանա, եթե այդպէս է, ապա ինչու Կորյունն իր գրքում ոչ մի ան-
գամ չի հիշատակում Ագաթանգեղոսի անունը:

Նախ Կորյունն իր գիրքը գրել է ավելի վաղ²³, հետևաբար չէր կարող գուշակել, թե
Մաշտոցի կամ Սահակի գործակիցներից կամ հետևորդներից ով հատկապէս տարիներ
հետո պատմութեան կգրի, որպէսզի անպայման հիշատակեր նրա անունը: Եվ հետո, ինչ-
պէս գիտենք, Կորյունը Մաշտոցի կյանքի և գործունէութեան, գրերի ստեղծման պատմու-
թյունը գրել է համառոտ՝ շատ անգամ խոստովանելով, թե միշտ չէ, որ կարողացել է
առանձին-առանձին հիշատակել Մաշտոցի գործի թլոյր հետևորդների անունները²⁴:

Նկատենք մի հանգամանք ևս. Կորյունից իմանում ենք, որ հայ գրերի ստեղծման
խնդրով մտահոգված է եղել նաև հայ միաբանների «աշխարհաբոգ» խորհուրդը²⁵: Ուրեմն
ինչու չենք կարող ենթադրել, թե Ագաթանգեղոսը կարող էր լինել այդ խորհրդի անդամ-
ներից մեկը, որը, թերևս, ավելի մոտիկ է կանգնած եղել այդ գործին:

Մի ուրիշ տեղ Կորյունը պատմում է, որ երբ Մաշտոցը որոշում է ճշանագրեր հորի-
նել վրացերեն լեզվի համար, հետն է առնում իր լավագույն աշակերտներից մի քանիսին
և գնում է վրաց կողմերը²⁶: Այստեղ ևս Կորյունը չի հիշատակում և ոչ մեկի անունը:

Հետևաբար չենք կարող ապահովաբար պնդել, թե Ագաթանգեղոսը խոսում է հայ

²¹ «Նոր Բաղդիքը Հայկազեան լեզուի», հ. 2, էջ 484:

²² Այդ մասին տե՛ս Մ. Արեղյան, Երկեր, հ. 9, Երևան, 1968, էջ 170—171:

²³ Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 85:

²⁴ Նույն տեղում, էջ 28:

²⁵ Նույն տեղում, էջ 86:

Եզանագրերի մասին, չկան նաև պարագաներ, որոնք դուրս-ինչ կասկածի տեղիք տան, թե նա նկատի է ունեցել վրաց և աղվանից տառերը, կամ այդ քոյրը միասին: Սակայն, ինչ-որ ավելի խավանական է, ինչպես մեկ անգամ արդեն նշեցինք, խոսքն ավելի շուտ կարող էր վերաբերել հենց հայկական տառերի ստեղծմանը:

Հաշվի առնելով, որ դանիելյան Եզանագրերից մինչև Ճեսարայան այբուբենի ստեղծումը մի քանի տարի այս կամ այն կողմ վերաբերում է 4-րդ դարի վերջից²⁶ մինչև 5-րդ դարի առաջին տասնամյակն ընդգրկող ժամանակահատվածին, դժվար չէ ենթադրել, որ Ագաթանգեղոսն ապրել է այդ շրջանում և ամենայն հավանականությամբ եղել է արդեն հասուն անձ, ալլապես չէր կարող իրեն վերապահել Եզանագրերի ստեղծման գործին իր անմիջական մասնակցությունը:

Ամենապարզ ենթադրություններով վերը հիշատակված ժամանակահատվածում Ագաթանգեղոսը պետք է լիներ մոտ 30—40 տարեկան կամ ավելի, ուրեմն ծնված պիտի լինի մոտավորապես 360—370 թվականների միջև, գուցե մեկ կամ մի քանի տարի առաջ կամ հետ: Այնուամենայնիվ, մեր ենթադրությունները հանգում են նրան, որ Ագաթանգեղոսը եղել է Մաշտոցի հասակակիցը և ամենայն հավանականությամբ պատկանել է նրա աշակերտների շրջանակին, մի բան, որ արդեն առաջարկվել է քանասիրության մեջ: Այդ հարցի կապակցությամբ ահա թե ինչ է գրել Մ. Արեղյանը. «Պարզ է և այն, որ «Ագաթանգեղայ Պատմությունը» հունասերների գործն է, Մաշտոցի կամ Սահակի աշակերտներից մեկի, թերևս հենց Մաշտոցի և ավելի ևս Սահակի կարգադրությամբ առաջ եկած»²⁷:

Հետաքրքիր է նաև, որ իբրև Ագաթանգեղոսի Պատմության հեղինակ առաջարկվել են նույնիսկ Մեսրոպ Մաշտոցի և Կորյունի անունները²⁸: Մեր տարբերակում, առաջին հայացքից որքան էլ որ համարձակ թվա, այդ ենթադրությունները լուրջ մտածության տեղիք են տալիս:

Կարծում ենք այդ հարցի կապակցությամբ քանասիրությունը դեռ ունի լուրջ անելիքներ, իսկ մեր ուսումնասիրությունը մի փորձ էր վերադառնալ այդ խնդրին և մի նոր տեսանկյունից քննել Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» հեղինակի ինքնության հարցը, որը կարելի է որոշարկել այսպես. Ագաթանգեղոսը ապրել է 4-րդ դարի վերջում և 5-րդ դարի առաջին կեսին՝ անմիջական մասնակցություն ունենալով հայ Եզանագրերի ստեղծման գործին:

В. А. АВАКЯН — К вопросу о личности автора Истории Армении Агатангелоса.— Работа является попыткой по-новому представить отрывок из предисловия Истории Агатангелоса, связанный со смыслом слова *ձեռնարկություն*, и на этой основе затронуть вопрос о личности автора Истории.

²⁶ Հայտնի է, որ դանիելյան Եզանագրերը Հայաստան քերվեցին Վուստայուրի թագավորի հիմնգերորդ տարում, ասել է թե՛ 393-ին: Իսկ Հր. Աճառյանը առաջարկում է նրորորդ տարում, տե՛ս «Տեղեկագիր Գիտ. Ակ. Հայկ. Ֆ.», 1941, № 1—6, էջ 170:

²⁷ Մ. Արեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 182:

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 181: